

Յակոբ Վ. ն ի կարգէն Յիսուսեանց, եւ ընդ նմին Ստամպուլցի Տէր Թարութիւն Եպիսկոպոս ՊԱՏՃԱՌ տպագրութեանս սորին . . . » :

Նոյն Յակոբ Վ. 1714ին ի Հոռմ, Ս. Ժողովոյ տպարանին մէջ տպած է նաեւ « Մեկնիչ Սրբոյ Աւետարանին » : Ասոր մէջ Հայոց ներկայ Եկեղեցւոյ եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ տեսնուած մէկ քանի տարբերութիւնները բաւական ընդարձակ կը շօշափէ՝ ի պաշտպանութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ վարդապետութեան : Ասոր սկիզբը կայ « Վկայութիւն Թարութիւն Վ. ի Արհեպիսկոպոսի Կեսարիա Պալէստինոյ » , հայերէն եւ լատիներէն : Լատիներէն թարգմանութեան մէջ անունը կը դրուի Anastasius փոխանակ Թարութիւնի : Այս վկայութիւնը, ինչպէս նաեւ նոյն տեղ տպուած Գրիգոր Արքեպ. ի Եդեսիոյ եւ Յովակիմ Արքեպ. ի Զուլայեցւոյ վկայութիւնները, պէտք է որ 1712ին վերջերը կամ 1713ի սկիզբները տպուած ըլլան . վասն զի անոնցմէ ետքը կայ Յիսուսեանց Աբբային հրամանագիրը տպագրուելու, 7 Յունիս 1713 թուականաւ, որուն մէջ կ'ըսուի՝ թէ այս գիրքն որովհետեւ արդէն Ս. Ժողովէն քննուած եւ հաստատուած է, ինքն եւս իրեն հպատակ Յակոբ Վ. Վիլտին թոյլ կու տայ տպագրել տալու : Ահաւասիկ Թարութիւն Արքեպ. ի սոյն վկայութիւնը .

Ես Թարութի Արհեպիսկոպոս Կեսարիա Պալէստինոյ, եւ սպասաւոր սք երուսաղէմի, տեսի զգիրքս, եւ ընթերցայ մտադրութիւն զայս հոգելի մատեանս, զոր